

**ՕՊԵՐԱՏԻՎ-ՅԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԽՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ \***

ՀՏԴ 343

DOI: 10.52063/25792652-2025.1.24-22

**ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵԴՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական  
իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

[gevorg.barseghyan@ysu.am](mailto:gevorg.barseghyan@ysu.am)

[ORCID: 0000-0002-5642-7658](https://orcid.org/0000-0002-5642-7658)

**Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հիմնավորվածության և համապատասխան նորմերի իրավական մոդելավորման տեսանկյունից մեթոդոլոգիական օժանդակություն ունի միազգային և այլ պետությունների փորձի ուսումնասիրումը:**

Սույն հոդվածի նպատակը միջազգային/վերապետական իրավական ակտերում և այլ պետությունների քրեական օրենսդրություններում տեղ գտած, օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված վերաբերելի կարգավորումների հետազոտումն է:

Այս համատեքստում մենք նպատակադիր ենք համարել հետազոտման առարկա դարձնել օպերատիվ-հետախուզական գործունեությունն ապահովող լիազորող նորմերի իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեության փորձի ուսումնասիրումը և օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտների դեմ ուսնձգող հանրորեն վտանգավոր արարքների քրեականացմանն ուղղությունները:

Դրված նպատակին հասնելու համար ձևակերպվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված միջազգային/վերապետական իրավական ակտերի ուսումնասիրում,

- ԱՄՆ՝ օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված իրավական կարգավորումների ուսումնասիրում,

- մայրցամաքային իրավական համակարգի պետությունների՝ օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված իրավական կարգավորումների ուսումնասիրում,

- իրականացված հետազոտության արդյունքներով անհրաժեշտ եզրակացությունների իրականացում:

Հետազոտության առարկան դիտարկվել է գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր (համագիտական) և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են դոգմատիկ, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության և իրավական մոդելավորման մեթոդները:

Իրականացված հետազոտության արդյունքում կատարվել են մի շարք եզրակացություններ, որոնք հնարավորություն են ընձեռում պատկերացում

---

\* Հոդվածը ներկայացվել է 16.02.2025թ., գրախոսվել՝ 21.03.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

**կազմելու օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական կարգավորման առկա ընդհանուր վիճակի վերաբերյալ, ինչպես նաև թույլ են տալիս ըմբռնել դրա զարգացման միտումները՝ այդպիսով ուրվագծելով նաև ներպետական օրենսդրության կարգավորումների արդիականացման և իրավական մոդելավորման հեռանկարը:**

**Հիմնաբառեր՝** օպերատիվ-հետախուզական գործունեություն, քրեաիրավական ապահովում, միջազգային փորձ, միջազգային իրավական ակտեր, այլ պետությունների փորձ, քրեական օրենսգիրք, լիազորող նորմեր, քրեականացման ուղղություններ,

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օպերատիվ-հետախուզական գործունեության (այսուհետև՝ նաև ՕՀԳ) քրեաիրավական ապահովման հիմնավորվածության և համապատասխան նորմերի իրավական մոդելավորման տեսանկյունից մեթոդոլոգիական օժանդակություն ունի միջազգային և այլ պետությունների փորձի ուսումնասիրումը:

Այս համատեքստում ըստ ՕՀԳ քրեաիրավական ապահովման ուղղությունների (Barseghyan 169) նպատակադիր ենք համարում հետազոտման առարկա դարձնել և ուսումնասիրել՝

- օպերատիվ-հետախուզական գործունեությունը ապահովող լիազորող նորմերի իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության փորձը (ՕՀԳ իրականացնող անձանց կողմից ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվությունը բացառող նորմեր և այլն)

- օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտների դեմ ոտնձգող՝ հանրորեն վտանգավոր արարքների քրեականացման ուղղությունները (ՕՀԳ ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման (լրամշակման և/կամ մշակման) հարցերը):

Օպերատիվ-հետախուզական գործունեությունը տարբեր իրավական համակարգեր կամ դատավարական կառուցակարգեր և ընթացակարգեր ունեցող պետություններում տարբեր կերպ է ընկալվում՝ հաճախ ՀՀ իրավական կարգավորումներից խիստ տարբերվող: Պետությունների զգալի մասում օպերատիվ-հետախուզական գործունեությունը չի տարանջատվում քրեական վարույթից, ի տարբերություն ՀՀ-ում և որոշ այլ՝ հիմնականում հետխորհրդային պետություններում տեղ գտած իրավական կարգավորումների, որոնց համաձայն՝ ՕՀԳ կարող է իրականացվել և՛ որպես ինքնուրույն գործունեություն, և՛ որպես նախաձեռնված քրեական վարույթում իրականացվող հետաքննության շրջանակներում օժանդակող գործունեություն:

Օպերատիվ-հետախուզական գործունեության տարակերպ իրավական ընկալումներով պայմանավորված՝ սույն աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվում են միջազգային և այլ պետություններում տեղ գտած այն իրավակարգավորումները միայն, որոնք նշանակություն ունեն և կարող են ուղենշային լինել ՀՀ-ում օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման համար: Այլ խոսքերով՝ այս աշխատանքի շրջանակներում չեն հետազոտվում և ներկայացվում միջազգային կամ այլ պետությունների օրենսդրություններում տեղ գտած, ՕՀԳ քրեաիրավական ապահովմանն ուղղված բոլոր կարգավորումները, այդ թվում՝ հանցակազմերը, այլ միայն նրանք, որոնք, մեր գնահատմամբ, կարող են նշանակություն ունենալ ՕՀԳ քրեաիրավական ապահովմանն ուղղված ՀՀ կարգավորումների իրավական մոդելավորման համար:

## II. ՕՊԵՐԱՏԻՎ-ՅԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԶՈՂՎՄԱՆ ՈՒՂԴԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ/ՎԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ (ՆՈՐՄԵՐԸ)

**1.** Մայրցամաքային և անգլոսաքսոնական իրավական համակարգերում որպես ՕԶԳ քրեաիրավական ապահովման մեթոդոլոգիական ընդհանուր բազա կարելի է դիտարկել միջազգային իրավական հետևյալ ակտերը.

- *Միավորված ազգերի կազմակերպության՝ կոռուպցիայի դեմ կոնվենցիան*, որի 33-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի իր ներքին իրավական համակարգի մեջ բոլոր անձանց որևէ անարդարացի վերաբերմունքից պաշտպանության ապահովման համար պատշաճ միջոցներ ներառելու հնարավորությունը, որոնք բարեխղճորեն և խելամիտ հիմքերով իրավասու մարմիններին հայտնում են այն իրավախախտումների հետ կապված փաստերի մասին, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան»: Հիշատակված կոնվենցիայի 37-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է. «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան այն անձին քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրելու հնարավորությունը՝ նախատեսելու հարցը, որն արդյունավետորեն աջակցում է որևէ իրավախախտման կապակցությամբ քննությանը կամ քրեական հետապնդմանը, որն այդպիսին է ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան»:

- *Միավորված ազգերի կազմակերպության՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան*, որի 26-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է. «Յուրաքանչյուր Մասնակից պետություն ուսումնասիրում է, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, այն անձին քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրելու հնարավորության մասին հարցը, որն էականորեն համագործակցում է սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործության կապակցությամբ իրականացվող քննությանը կամ քրեական հետապնդմանը»:

ՄԱԿ-ի հիշյալ կոնվենցիաների մեջբերված կարգավորումները, ըստ էության, պարտավորեցնում են դրանց անդամակցած պետություններին իրենց ներքին օրենսդրությանը համապատասխան ամրագրել կարգավորումներ, որոնք ուղղված կլինեն իրականացվող քննությանը կամ քրեական հետապնդմանն աջակցած համագործակցող անձանց քրեաիրավական ապահովում, կոնվենցիաների տերմինալոգիայով՝ քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրելուն:

Հարկ ենք համարում հատուկ ընդգծել, որ միջազգային պայմանագրերը, այդ թվում՝ հիշատակված կոնվենցիաները, եզրույթներն օգտագործում են, որպես կանոն, լայն իմաստով, քանի որ այդ եզրույթները պայմանագրերը վավերացրած կամ կոնվենցիաներին միացած պետությունների ներքին իրավակարգավորումներում կարող են տարբեր կերպ ընկալվել: Մեզ հետաքրքրող համատեքստում տարակերպ այդ ընկալումը պայմանավորված է օպերատիվ-հետախուզական գործունեության՝ քրեական վարույթում որպես օժանդակող գործունեություն կամ որպես ինքնուրույն գործունեություն իրականացվելու հնարավորության հանգամանքով: Սակայն, ինչպես պարզ է դառնում մեջբերված կոնվենցիոն կարգավորումներից, անդամ պետությունները պարտավոր են քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրել իրական և էական աջակցություն ցուցաբերած համագործակցող ցանկացած անձի՝ դա չպայմանավորելով նախաձեռնված քրեական վարույթի առկայությամբ կամ բացակայությամբ:

**2.** Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման տեսանկյունից հետազոտական բավականին մեծ հետաքրքրություն

ունի Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) իրավաստեղծ պրակտիկայի ուսումնասիրումը: ԱՊՀ կազմի մեջ մտնող պետություններում, կարծես, ձևավորվել է օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման սեփական մոտեցում, ինչի համար հիմք են ծառայել տարածաշրջանային նշանակության որոշ ակտեր:

ԱՊՀ «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» խորհրդատվական օրենսդրական ակտը (այսուհետ՝ Նաև Ակտ)՝ ընդունված 1996 թվականի նոյեմբերի 2-ին, առաջարկում է անդամ պետությունների ազգային օրենսդրությունում ամրագրել նորմեր, որոնք, ի թիվս այլի, ուղղված են օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը (Постановление Межпарламентской Ассамблеи государств – участников Содружества Независимых Государств 1996):

«Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» խորհրդատվական օրենսդրական ակտում տեղ են գտել օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման և՛ կարգավորող, և՛ պաշտպանող ուղղությունների վերաբերող նորմեր:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման՝ կարգավորող ուղղության դիտանկյունից բավականին հետաքրքրական է Ակտի 24-րդ, հոդվածի 3-րդ պարբերությունում տեղ գտած կարգավորումը, համաձայն որի՝ «Անձը, որն իրականացնում է օպերատիվ ներթափանցում հանցավոր կանցամակերպություն, ենթակա է քրեական պատասխանատվության Զրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հանցանքի հատկանիշներ պարունակող, հանրորեն վտանգավոր արարք կատարելու համար, եթե դրա կատարումը հիմնավորված չի եղել օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրների իրականացմամբ, բացառությամբ՝ մարդուն կյանքից զրկելու կամ ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու»:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման՝ կարգավորող ուղղության համատեքստում Նաև հետաքրքրական է Ակտի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց գործողությունների իրավաչափությունը» վերտառությամբ 29-րդ հոդվածի կարգավորումը, համաձայն որի՝ «քաղաքացիների կյանքը և առողջությունը, նրանց սահմանադրական իրավունքները և օրինական շահերը պաշտպանելիս, ինչպես նաև հասարակության և պետության անվտանգությունը հանցավոր ոտնձգություններից ապահովելու համար թույլատրվում է օրենքով պաշտպանվող շահերին հարկադրված վնաս պատճառել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մարմնի աշխատակցների կամ նրանց հետ համագործակցող անձանց կողմից՝ նշված անձանց կողմից իրենց ծառայողական կամ հասարակական պարտքի իրավաչափ կատարման ընթացքում»:

ԱՊՀ «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» խորհրդատվական օրենսդրական ակտը, փաստորեն, առաջարկում է անդամ պետություններին իրենց օրենսդրություններում (քրեական օրենսգրքերում) ամրագրել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին իրավաչափ վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման պաշտպանող ուղղության համատեքստում հետաքրքրական են հիշատակված ակտի հետևյալ նորմերը.

- Հոդված 6. ոստիկանության աշխատակցին, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձին, զինծառայողին կամ հանցավորության դեմ պայքարի հասարակական պարտքը կատարող անձին դիմադրություն ցույց տալը

- Հոդված 7. ոստիկանության աշխատակցի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի, զինծառայողի կամ հանցավորության դեմ պայքարի հասարակական պարտքը կատարող անձի կյանքի նկատմամբ ոտնձգելը
- Հոդված 8. դատախազի, քննիչի, նախաքննություն կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի ծառայողական գործունեությունը խոչընդոտելը
- Հոդված 9. օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ապօրինի իրականացնելը:

**3.** Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման համատեքստում հետազոտական հետաքրքրություն ունի նաև Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) Խորհրդարանական վեհաժողովի՝ 2015 թվականի նոյեմբերի 26-ի № 8-6 որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում)՝ «ՀԱՊԿ անդամ-պետությունների օրենսդրության ներդաշնակեցման առաջարկություններ՝ ուղղված կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և կանխարգելման ոլորտում հարաբերությունների կարգավորմանը» (Постановление № 8-6 Парламентской Ассамблеи Организации Договора о коллективной безопасности 2015):

Հիշատակված որոշման՝ «ՀԱՊԿ անդամ պետությունների քրեական օրենսդրություն կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հնարավորություն ընձեռող նորմերի համալիրի ներառումը» վերտառությամբ 2-րդ հոդվածում ամրագրված են, ըստ էության, օպերատիվ-հետախուզական քրեաիրավական ապահովմանն ուղղված կարգավորումներ:

Այսպես՝ հիշյալ հոդվածում ամրագրված է հետևյալը. «...ՀԱՊԿ անդամ պետությունների քրեական օրենսդրության իրավահամեմատական վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները:

...

2.8. Որպես արարքի հանցավորությունը բացառող ինքնուրույն հանգամանքի առանձնացում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս հանցակիցների շրջանում լինելը:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետ մեթոդներից մեկը այնպիսի օպերատիվ-հետախուզական միջոցառումն է, ինչպիսին է կազմակերպված խմբերում կամ հանցավոր համագործակցություններում օպերատիվ ներդրումը:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների թվում անհրաժեշտ է նշել կազմակերպված խմբերում և հանցավոր համագործակցություններում օպերատիվ ներդրման սուբյեկտների իրավական պաշտպանության ապահովումը ...»

Հարկ է նաև նշել, որ Որոշման մեջ որպես օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հաջողված օրինակներ հիշատակվում են Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի և Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ հետազոտվող թեմային վերաբերելի կարգավորումները: Հիշյալ հոդվածի մեջբերված մասում, որպես քննարկված խնդրի ամփոփում, նաև արձանագրվել է, որ «արարքի հանցավորությունը բացառող նշված նորմերը արժանի են ուշադրության՝ ՀԱՊԿ անդամ պետությունների քրեական օրենսգրքերում դրանք ամրագրելու տեսանկյունից, ինչը կստեղծի կազմակերպված խմբերի և հանցավոր համագործակցությունների մասնակիցներին բացահայտելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող անձանց իրավական պաշտպանության անհրաժեշտ իրավական երաշխիքներ»:

### III. ՕՊԵՐԱՏԻՎ-ՅԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԵՆԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆՆ ԽՐՀՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՄՆ ՕՐԵՆՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում օպերատիվ-հետախուզական գործունեությունը մինչդառական վարույթի մասն է և որպես առանձին ինստիտուտ նախատեսված չէ: ԱՄՆ օրենսդրությամբ որոնողական և դատավարական գործառնությունները մեկ ամբողջություն են. ոստիկանության աշխատակիցը միաժամանակ կարող է ունենալ և՛ քննիչի, և՛ հետախույզի (դետեկտիվի) կարգավիճակ:

ԱՄՆ գործող նորմատիվ իրավական բազան կարգավորում է քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման իրավաչափության հարցերը, իսկ դատարանները ուշադրություն են դարձնում այն հանգամանքին, որ աշխատակիցները գաղտնի հետաքննություն իրականացնելիս պետք է նախատեսեն հանրորեն վտանգավոր հետևանքներ առաջանալու բոլոր հնարավորությունները և կիրառեն դրանց կանխարգելման անհրաժեշտ միջոցներ: Գաղտնի հետաքննական գործունեության պայմաններում (ՀՀ օրենսդրությամբ՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն) վնասի պատճառման իրավաչափության հարցերի վերահսկման նպատակով ԱՄՆ-ում ստեղծվել է Գաղտնի օպերացիաների նկատմամբ վերահսկողության կոմիտե (Undercover review committee), որը պատասխանատու է նրա համար, որ քրեական օրենքը խախտելու դիսկրեցիոն (հայեցողական) լիազորություն ունեցող աշխատակիցների կողմից այդպիսի լիազորությունից օգտվելը հիմնավորված լինի միայն նախաքննության շահերով:

ԱՄՆ օրենսդրությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրների իրականացման ժամանակ իրավաչափ վնասի պատճառման հարցերին, օրինակ, երբ անձը, իրականացնելով «օպերատիվ ներդրում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, մասնակցում է խմբի կազմում հանցանքի կատարմանը: Այս իրավիճակները կարգավորվում են քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներով, որոնց համակարգը ԱՄՆ-ում բաղկացած է մի քանի ինստիտուտներից: Հիմնականում դրանք ունեն ընդհանրացված անվանում «հաստատական (դրական - ԳԲ) պաշտպանություն» (affirmative defense), դասակարգվում են «արդարացնող կամ ներող հանգամանքների» (excuse) և «հիմնավորումների» (justification): Օրինակ՝ Արկանզաս նահանգի Օրենսգրքի 5-2-601-ից 5-2-622 բաժինները ամրագրում են հիմնավորումների ցանկը (Justification definitions), 5-1-112-ից 5-1-114, 5-2-201-ից 5-2-209 և 5-2-404 բաժիններում ամրագրված են արդարացնող կամ ներող հանգամանքները (excuse) (Arkansas Code, Title 5):

Փենսիլվանիայի համալսարանի իրավունքի դպրոցի պրոֆեսորներ Պ. Ռոբինսոնը, Մ. Կուսմաուլը, Զ. Ստոդդարդը, Ի. Ռուդյակը և Ա. Կուրստենը իրականացրել են հետազոտություն՝ նվիրված ԱՄՆ օրենսդրությամբ նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներին (Robinson and others): Այս հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ ԱՄՆ օրենսդրությունում առկա են որակյալ անձեռնմխելիության կանոններից բխող հատուկ ստեղծված հանգամանքներ, որոնք կիրառվում են առանձին կատեգորիայի այն անձանց վարքագծի իրավական գնահատման դեպքում, որոնք, նախաքննության շահերից ելնելով, դրսևորել են հանցավոր վարքագիծ:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման վերաբերյալ ԱՄՆ իրավակարգավորումների ուսումնասիրության համատեքստում հատուկ ուշադրության է արժանի թույլատրված ապօրինի գործունեության ինստիտուտը՝ Otherwise illegal activity – OIA, (Report to the Chairman, U.S. Senate 2015): ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի (FBI)՝ Գլխավոր դատախազին

2005 թվականին ներկայացված հատուկ զեկույցի 3-րդ գլխում նշված է, որ «Գաղտնի ինֆորմատորների վերաբերյալ կանոնները հնարավորություն են տալիս Բյուրոյին թույլատրելու ինֆորմատորներին զբաղվել գործունեությամբ, որը այլ հանգամանքներում, դաշնային կամ նահանգային օրենսդրության համաձայն, կհամարվեր հանցավոր, եթե այդպիսի թույլտվություն չլիներ: Այսպիսի վարքագիծը կոչվում է թույլատրված ապօրինի գործունեություն՝ Otherwise illegal activity – OIA (Special Report, Office of the Inspector General 2005): Այն ենթադրում է գաղտնի օպերացիաների շրջանակներում (Guidelines on Undercover Operations 2013) օպերատիվ ուժերով համապատասխան միջավայրում ներդրված իրավապահ մարմնի աշխատակցի, գաղտնի գործակալի (undercover agent) (Attorney General's Guidelines On Fbi Undercover Operations 1992), գաղտնի ինֆորմատորի (classified informant, CI) կամ կոնֆիդենցիալ մարդկային աղբյուրի (confidential human source, CHS) (The Attorney General's Guidelines Regarding the Use of FBI Confidential Human Sources 2004) հանցավոր գործունեության օրինականացում:

Այս կապակցությամբ ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի նախկին գործակալ Մայքլ Գերմանը, որն իր հետագա գործունեությունը շարունակել է Նյու Յորքի համալսարանին կից Բրենսանի արդարադատության կենտրոնում՝ զբաղվելով ազգային անվտանգության իրավունքի հետազոտությամբ, ասել էր. «բանն այն չէ, որ մենք մերժում ենք այդ հանցագործությունները. մենք թույլատրում ենք ինֆորմատորին դրսևորել հանցավոր վարքագիծ՝ հետագա հետաքննության նպատակով» (Cameron 2016):

ՕՀՄ իրականացնող անձանց քրեական պատասխանատվության (դրա բացառման) վերաբերյալ դրույթներ են ամրագրված նաև ԱՄՆ Դատավճիռների նշանակման հանձնաժողովի դատավճիռների նշանակման ղեկավար սկզբունքներում: Այսպես՝ հիշյալ ակտի 3 գլխի «B» մասի 1.1-ին կետի «Մեկնաբանություն» բաժնի 1-ին կետում ամրագրված է. «անձը, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության հանցագործության համար (օրինակ՝ իրավապահ մարմնի գաղտնի գործող աշխատակիցը), հանցագործության մասնակից (սուբյեկտ) չէ» (Guidelines Manual 1987):

Վերը շարադրվածի համատեքստում հարկ ենք համարում նաև նշել, որ ԱՄՆ քրեաիրավական կամ քրեադատավարական օրենսդրությունը գործակալի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս հանցանք կատարելու դեպքում քրեական պատասխանատվությունից «անձեռնմխելիությունը» բացարձակ կերպով չի ընկալում, քանզի գաղտնի հետաքննության սուբյեկտի հնարավոր հակաիրավական վարքագծի սահմանների նախնական հաստատումից և իրավագործումից (authorization) բացի պետք է առկա լինեն փաստական հանգամանքներ, այդ թվում՝ օպերատիվ-տակտիկական իրադրություն, ինչը կվկայի աշխատակցի կամ գործակալի կողմից ընտրված վարքագծի իրական անհրաժեշտության մասին: Այսպես՝ ԱՄՆ գերագույն դատարանը «ԱՄՆ ընդդեմ Ռասսելլի» գործով 1973 թվականի № 71-1589 որոշման մեջ արձանագրել է, որ «իրավապահ մարմինները դիմել են բացահայտման գործնականում միակ միջոցին՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող անձանց միջավայր ներթափանցելուն և նրանց հանցավոր գործունեությանը մասնակցելուն: Այսպիսի միջոցը հետաքննության ճանաչված և թույլատրելի միջոց է» (United States v. Russell 1973):

Նյու Յորքի Արևելյան շրջանի դատարանում 1981 թվականի՝ «ԱՄՆ ընդդեմ Մայերսի» գործով մեկ վարույթում միացված մի քանի գործերի նախնական դատական նիստի ժամանակ դատավոր Ջորջ Չեյնի Պրատորը երդվյալ ատենակալներին պարզաբանում է ներկայացնում «թույլատրված ապօրինի գործունեության» ընթացքում գաղտնի հետաքննության աշխատակիցների ֆորմալ հանցավոր պրովոկացիոն գործունեության թույլատրելիության վերաբերյալ (United

States v. Myers 1981): Պարզաբանման տեքստում նշված էր. «Բոլոր այն դեպքերում, երբ պետական ծառայողներն իրենց իրավապահ գործառնություններն իրականացնելիս օգնություն են ցուցաբերում հանցագործներին կամ նրանց հետ մասնակցում են նրանց հանցավոր գործունեությանը, հարցեր են առաջանում նրանց վարքագծի իրավականության և օրինականության հետ կապված, ինչպես նաև այն մասին, թե օրենքն արդյո՞ք պետք է պատժի որևէ մեկին՝ մասնավորապես պետական մարմինների կողմից պրովոկացված հանցավոր գործունեությանը մասնակցելու համար: Պատասխանները պետք է հիմնվեն փոխտրադիցիայի, հոգեբանության, օրենսդրության, սահմանադրական իրավունքի, իրավակիրառման գործնական կարիքների և նույնիսկ ճշտի և սխալի վերաբերյալ չտարբերակված ներքին զգացմունքների վրա» (United States v. Linnas 1981): Դիրքորոշումների ամփոփմամբ՝ դատարանն արձանագրում է, որ «թեև ԱՄՆ գերագույն դատարանի որոշ դատավորներ կարծում են, որ գաղտնի գործունեությունը խաբեություն և ծուղակ է, և ոստիկանությունում նման հնարքները, Սահմանադրության համաձայն, պետք է արգելվեն, այդուհանդերձ, այս հարցի վերաբերյալ կարծիքների ճնշող մեծամասնությամբ, այդ թվում՝ գերագույն դատարանի կողմից, ճանաչվել է, որ մեր հասարակությունում (նկատի է ունեցվում ԱՄՆ հասարակությունում) հանցավորության դեմ պայքարի համար ոստիկանությանը թույլատրված է կիրառել գաղտնի գործակալների, որոնք անմիջականորեն փոխգործակցում են հանցավոր տարրերի հետ և հնարավորություն ունեն կատարելու հանցանքներ» (United States v. Linnas 1981):

Մոնտանայի գերագույն դատարանը Մարկ Ջ. Բրեդիի՝ Արդարադատության դեպարտամենտի դեմ ներկայացրած բողոքի հիման վրա նախաձեռնված գործով 1999 թվականի հունիսի 29-ի № 98-073 որոշման 12-րդ կետում արձանագրել էր. «Դաշնային, նահանգային կամ տեղական օրենսդրությամբ արգելված ցանկացած գործունեությանը մասնակցելը, չհաշված հափշտակված կամ մաքսանենգված ապրանքների գնումը կամ անձը հաստատող կեղծ փաստաթղթերի պատրաստումը, պետք է նախապես թույլատրված լինի դատախազի կողմից: Թույլտվությունը պետք է ամրագրված լինի գրավոր տեսքով» (IN RE: the Grievance of Mark J. BRADY 1999): Հիշատակված գործով քննվում էր գաղտնի գործակալ Բրեդիի արարքների հակաիրավականությունը, մասնավորապես՝ թմրամիջոց պահելը, որի միջոցով նա ձեռք էր բերել թմրամիջոցի արտադրությամբ զբաղվողների վստահությունը: Այս որոշման 21-րդ կետում դատարանը մեջբերել էր գլխավոր դատախազի՝ իրավապահ մարմինների կողմից կոնկրետ դեպքի հետ կապված ապօրինի գործողությունների նպատակային կատարման պրակտիկայի վերաբերյալ մեկնաբանությունն այն մասին, որ «դաշնային կամ նահանգային օրենքով հանցանք համարվող արարքների կատարման դեպքում գործակալը պետք է ունենա իր ղեկավարի և դաշնային դատախազի գրավոր թույլտվությունը»:

ԱՄՆ Նորմատիվային բազայի և նախադեպի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ իրավապահ մարմնի աշխատակցի կամ համագործակցող անձի քրեական պատասխանատվությունը բացառելու (նման հանգամանքի կիրառման) համար առկա է երկու պայման՝ հանցավոր գործունեությամբ զբաղվելու իրավաչափությունը (հիմքերին և իրադրությանը ներկայացվող իրավաչափության պայման) և վնաս պատճառելու իրավաչափությունը (վնասին և դրա պատճառման իրավաչափությանը ներկայացվող պայմաններ):

ԱՄՆ դաշնային օրենսդրությունը օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման պաշտպանող գործառնությունն առավել մեծ ուշադրություն է դարձրել, քան կարգավորող գործառնություն: ԱՄՆ օրենսգրքի 18-րդ բաժնի 73-րդ գլխում՝ 1501-1521 հոդվածներում, ամրագրված են Նորմեր (հանցակազմեր), որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում արդարադատությունը խոչընդոտելու համար (The United States Code, Title 18): Այս

Նորմերը բովանդակային որոշ ընդհանրություններ ունեն ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 45-րդ գլխում ամրագրված հանցակազմերի հետ: Օրինակ՝ ԱՄՆ օրենսգրքի՝ քրեական հետաքննությունը խոչընդոտելու համար քրեական պատասխանատվությունը նախատեսող 1510-րդ հոդվածը որոշ ընդհանրություններ ունի ՀՀ քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի հետ, որը պատասխանատվություն է նախատեսում արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելու համար: Սակայն, ի տարբերություն ԱՄՆ օրենսգրքի 1510-րդ հոդվածի, Օրենսգրքի 486-րդ հոդվածը պատասխանատվություն չի նախատեսում քրեական վարույթից դուրս որպես ինքնուրույն գործունեություն իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեությանը միջամտելու կամ խոչընդոտելու համար:

Այսպես՝ Քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի հիմնական հանցակազմն ունի հետևյալ բովանդակությունը՝ «*արդարադատության կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությունը կամ գործի քննությունը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի կամ ներկայացուցչի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը ...*»: Մեջբերված նորմի ոչ խորքային վերլուծությունից անգամ հետևում է, որ խոսքը կոնկրետ գործի՝ նախաձեռնված վարույթի շրջանակներում իրականացվող քննությունը խոչընդոտելու նպատակով միջամտության մասին է (ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 486):

Հիշյալ հոդվածի համատեքստում՝ մեկնաբանման կարիք ունի «... հետաքննության մարմնի ... գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու» վերաբերյալ ձևակերպումը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ հետաքննության մարմինը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված պետական մարմնի համակարգում գործող և օպերատիվ-հետախուզական գործառնություններ իրականացնող ստորաբաժանման ղեկավարը (հետաքննության մարմնի պետ) և աշխատակիցներն (հետաքննիչներ) են, որոնք նախաքննության շրջանակներում իրավասու են կատարելու գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Հայաստանի Հանրապետությունում «հետաքննություն» կոչվող ինստիտուտը, առհասարակ, գործող քրեադատավարական կարգավորումների համաձայն, ինքնուրույն չէ, այլ հետաքննության մարմնի կողմից նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն է, որը ներառում է գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 6, մաս 1, կետ 6): Մեջբերված ձևակերպումներից պարզ է դառնում, որ հետքաննությունը բացառապես նախաքննության ընթացքում իրականացվող օժանդակ գործունեություն է, որը կարող է ներառել նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը: Հետևաբար՝ Օրենսգրքի 486-րդ հոդվածը ՕՀԳ քրեաիրավական ապահովումն իրականացնում է միայն նախաքննության ընթացքում ՕՀՄ կատարման դեպքում՝ գործի քննությունը խոչընդոտելու նպատակով հետաքննության մարմնի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը քրեականացնելու միջոցով, իսկ քրեական վարույթից դուրս օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը խոչընդոտելու նպատակով միջամտելու հետ կապված հարաբերությունները այս կամ Քրեական օրենսգրքի որևէ այլ հոդվածով կարգավորված (արգելված) չեն: Մինչդեռ, Միացյալ Նահանգներում իրականացվող քրեական վարույթում չեն տարանջատվում նախաքննությունը և հետաքննությունը, անկախ նախաձեռնված քրեական վարույթի առկայությունից՝ օպերատիվ-հետախուզական գործունեությունը գործի քննության (criminal investigation) մաս է,

ուստի՝ ԱՄՆ օրենսգրքի 1510-րդ հոդվածում տեղ գտած ձևակերպումը՝ քրեական հետաքննիչը (criminal investigator), ներառում է հնարավոր բոլոր սուբյեկտներին՝ թե՛ նախաքննություն և/կամ հետաքննություն իրականացնող, թե՛ նախաձեռնված քրեական վարույթից դուրս օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց:

ԱՄՆ օրենսգրքի 1512-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում վկային, տուժողին կամ ինֆորմատորին խոչընդոտելու համար (The United States Code, Title 18): Հիշյալ հոդվածի (a) (1) պարագրաֆը պատասխանատվություն է նախատեսում թվարկված անձանց սպանության կամ սպանության փորձի համար, որը նպատակ է ունեցել (A) խոչընդոտելու նրանց մասնակցությունը կամ ցուցմունք տալը պաշտոնական վարույթում, (B) խոչընդոտելու նրանց կողմից ձայնագրությունների, փաստաթղթերի կամ այլ առարակների ներկայացումը, (C) խոչընդոտելու նրանց կողմից ԱՄՆ իրավապահ մարմիններին կամ դատարանին տեղեկության տրամադրումը՝ դաշնային հանցագործության կամ դաշնային հնարավոր հանցանքի կատարման կամ պրոբացիայի, պայմանական վաղաժամկետ ազատման կամ մինչև դատաքննությունը ազատ արձակելու պահանջների խախտման վերաբերյալ:

Հիշատակված հոդվածի (a) (2) պարագրաֆը պատասխանատվություն է նախատեսում «նշված անձանց նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու, ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքի կամ ֆիզիկական բռնություն գործադրելու փորձի համար, որը նպատակ է ունեցել (A) ազդելու, հետաձգելու կամ կանխելու նշված անձանց կողմից ցուցմունք տալը պաշտոնական վարույթում, (B) ստիպել կամ շահագրգռել նրանց (i) ցուցմունք չտալ կամ թաքցնել ձայնագրություն, փաստաթուղթ կամ այլ առարկա պաշտոնական վարույթում, (ii) փոխել, ոչնչացնել, խեղել կամ թաքցնել առարկա՝ նպատակ ունենալով խաթարելու առարկայի ամբողջականությունը կամ հասանելիությունը պաշտոնական վարույթում օգտագործելու համար, (iii) խուսափելու կատարել վարույթային պարտականությունները, որոնք պահանջում են ներկայանալ որպես վկա կամ ներկայացնել ձայնագրություն, փաստաթուղթ կամ այլ առարկա պաշտոնական վարույթում, կամ (iv) բացակայել պաշտոնական վարույթից, որին անձը կանչվել էր դատական կարգով, (C) խոչընդոտելու, երկարաձգելու կամ կանխելու նրանց կողմից ԱՄՆ իրավապահ մարմիններին կամ դատարանին տեղեկության տրամադրումը՝ դաշնային հանցագործության կամ դաշնային հնարավոր հանցանքի կատարման կամ պրոբացիայի, պայմանական վաղաժամկետ ազատման կամ մինչև դատաքննությունը ազատ արձակելու պահանջների խախտման վերաբերյալ»:

Մեքսիկական օրենսգրքի համանման բովանդակությամբ իրենց ամրագրումն են գտել նաև տարբեր նահանգների քրեական օրենսդրությունում, օրինակ՝ Նևադայի վերանայված ստատուտի՝ «Հանցանքներ և պատիժներ» վերտառությամբ 15-րդ գլխի «Հանրային արդարադատության դեմ ուղղված հանցանքներ» վերտառությամբ 199-րդ բաժնում (Nevada Revised Statutes, Chapter 199), Հյուսիսային Դակոտայի քրեական օրենսգրքի 12.1-9-01 և 12.01-9-02 բաժիններում (North Dakota Century Code. Title 12.1-09 Criminal Code Chapter), Միսսիսիպիի Օրենսգրքի 97-րդ գլխի 9-րդ բաժնի 3-րդ հոդվածի 97-9-127 մասում (Mississippi Code Title 97, Chapter 9), Նեբրասկա նահանգի վերանայված ստատուտի՝ «Հանցանքներ և պատիժներ» վերտառությամբ 28-րդ գլխի 28-901 և 28-919 հոդվածներում (Nebraska Revised Statutes, Chapter 28):

#### IV. ՕՊԵՐԱՏԻՎ-ՅԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶՐԵԱՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆՆ ԽՐԱԿԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մայրցամաքային իրավական համակարգի պետություններում ՕՀԳ քրեաիրավական ապահովման ուղղված իրավակարգավորումների համատեքստում հետազոտական հետաքրքրություն ունի Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգիրքը, որի 32-րդ հոդվածը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք է համարում իրավապահ մարմնի հանձնարարությունը կատարելը: Հիշատակված հոդվածն ամրագրում է. «1. Անձը, որն իրավաչափորեն կատարել է հանցավոր արարք նմանակող գործողություններ, սույն օրենսգրքով ենթակա չէ պատասխանատվության: 2. Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա իրավապահ մարմնի օրինական այլ առաջադրանք կատարելիս մասնակցել է հանցավոր կազմակերպության կամ կազմակերպված խմբի գործունեությանը և նրանց կատարած հանցավոր արարքներին և դուրս չի եկել այդ առաջադրանքի սահմաններից: 3. Անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե հանցավոր արարքը նմանակող գործողություններ կամ իրավապահ մարմնի այլ առաջադրանք կատարելիս նա գերազանցել է այդ առաջադրանքի սահմանները, սակայն նրա պատիժը կարող է մեղմացվել սույն օրենսգրքի 59-րդ հոդվածին համապատասխան: 4. Իրավապահ մարմիններն են ոստիկանությունը, նախաքննության այլ մարմինները և դատախազությունը, ինչպես նաև քրեական հետախուզության մարմինները» (Criminal Code of Republic of Lithuania 2000):

Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգիրքը որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք է համարում նաև մասնագիտական պարտքը կատարելը: Այսպես՝ հիշյալ օրենսգրքի 30-րդ հոդվածն ամրագրում է. «1. Անձը սույն օրենսգրքով պատասխանատվություն չի կրում մասնագիտական պարտքը կատարելիս պատճառված վնասի համար, եթե նա չի գերազանցել օրենքներով կամ այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունները: 2. Անձը սույն օրենսգրքին համապատասխան ենթակա է պատասխանատվության մասնագիտական պարտքը կատարելիս պատճառված վնասի համար, եթե նա գերազանցել է օրենքներով կամ այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունները, սակայն նրա պատիժը կարող է մեղմացվել սույն օրենսգրքի 59-րդ հոդվածին համապատասխան»:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման կարգավորող ուղղության դիտանկյունից հետազոտական հետաքրքրություն է պարունակում Շվեյցարիայի Համադաշնության քրեական օրենսգիրքը (Swiss Criminal Code 1937): Այսպես, Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 317<sup>bis</sup> հոդվածն ամրագրում է. «1. Ցանկացած անձ, որը գաղտնի հետաքննության շրջանակներում դատարանի թույլտվությամբ պատրաստում, փոխում կամ օգտագործում է փաստաթղթեր՝ իր լեզենդը ստեղծելու կամ պահպանելու համար, կամ Դաշնային հետախուզական ծառայության (FIS) թույլտվությամբ պատրաստում, փոխում կամ օգտագործում է փաստաթղթեր՝ 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Հետախուզական ծառայության մասին» օրենքի 17-րդ հոդվածի համաձայն (IntelSA), կամ Պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության և աջակցության դաշնային դեպարտամենտի (DDPS) ղեկավարի թույլտվությամբ՝ Intelsat-ի 18-րդ հոդվածի համաձայն՝ իր լեզենդը կամ հորինված անհատականությունը ստեղծելու կամ պահպանելու նպատակով ենթակա չէ քրեական պատասխանատվության 251-րդ,

252-րդ, 255-րդ կամ 317-րդ հոդվածներով նախատեսված հանցանքները կատարելու համար<sup>1</sup>:

2. Ցանկացած անձ, որը, գաղտնի հետաքննություն անցկացնելու թույլտվություն ունենալով կամ իրավասու մարմնի ցուցումով, IntelSA-ի 17-րդ կամ 18-րդ հոդվածներին համապատասխան, պատրաստում է պաշտոնական փաստաթղթեր կամ դրանցում փոփոխություններ է կատարում՝ լեգենդ կամ հորինված անհատականությունն ստեղծելու նպատակով, ենթական չէ քրեական պատասխանատվության 251-րդ, 252-րդ, 255-րդ կամ 317-րդ հոդվածներով նախատեսված հանցանքները կատարելու համար:

3. Ցանկացած անձ, որը, «Վկաների ոչ դատավարական պաշտպանության մասին» 2011 թվականի դեկտեմբերի 23-ի դաշնային օրենքի համաձայն, կազմում, փոփոխում կամ օգտագործում է պաշտոնական փաստաթղթեր, ենթակա չէ քրեական պատասխանատվության 251-րդ, 252-րդ, 255-րդ կամ 317-րդ հոդվածներով նախատեսված հանցանքները կատարելու համար»:

Հարկ է նաև նշել, որ հիշատակված կարգավորումները Շվեյցարիայի քրեական օրենսգիրք են ներմուծվել «Գաղտնի հետաքննության մասին» 2003 թվականի հունիսի 20-ի դաշնային օրենքով (BVE)՝ ներդաշնակեցնելու այս օրենքի և քրեական օրենսգրքի կարգավորումները. Գաղտնի հետաքննության մասին դաշնային օրենքի «Եզրափակիչ դրույթներ» վերտառությամբ 3-րդ գլխի 24-րդ հոդվածով առաջարկվել է Շվեյցարիայի քրեական օրենսգիրքը լրացնել 317<sup>bis</sup> հոդվածով (Bundesgesetz über die verdeckte Ermittlung 2003):

Գաղտնի հետաքննության մասին դաշնային օրենքը կարգավորում է նաև թույլատրելի վնասի սահմանները: Զննարկվող օրենքի՝ «Թույլատրելի ներգործության չափը» վերտառությամբ 10-րդ հոդվածն ամրագրում է «1. Զննիչները չեն կարող հանցավոր մտադրություն առաջացնել, նաև չեն կարող հանցավոր մտադրությունն ուղղել ավելի ծանր հանցագործությունների: Նրանք պետք է սահմանափակվեն արդեն իսկ առկա հանցավոր մտադրության հստակեցմամբ: 2. Նրանց գործունեությունը տվյալ հանցագործությունը պարզելու մեջ պետք է ունենա միայն երկրորդական նշանակություն: 3. Անհրաժեշտության դեպքում, նրանք կարող են հիմնական գործարքի նախապատրաստման նպատակով կատարել փորձական գնումներ կամ համապատասխան միջոցներով փաստել իրենց տնտեսական ցուցանիշները: 4. Եթե քննիչն անցնում է թույլատրելի վարքագծի սահմանները, ապա դա պետք է պատշաճ կերպով հաշվի առնվի ազդված անձի պատժի նշանակման ժամանակ, կամ պատժից պետք է հրաժարվել»:

Զննարկվող օրենքի՝ «Լեգենդի կամ գաղտնիության խոստման» վերաբերյալ 6-րդ հոդվածը երաշխավորում է գործակալների (ՀՀ օրենսդրության եզրութաբանությամբ՝ ՕՀԳ մարմնի աշխատակցի կամ համագործակցող անձի), կարելի է ասել, բացարձակ գաղտնիությունը, ընդհուպ այն դեպքերում, երբ նշված անձինք հանցանք են կատարում իրենց աշխատանքի ընթացքում. այս դեպքում նրանց նկատմամբ քրեական վարույթն իրականացվում է այն հորինված անունով, որով նրանք հանդես են եկել:

Գաղտնի հետաքննության մասին դաշնային օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքին համապատասխան գործող քննիչները ենթակա չեն քրեական պատասխանատվության 1954 թվականի հոկտեմբերի 3-ի «Թմրամիջոցների մասին» օրենքի 19-րդ և 20-22-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների կատարման համար:

<sup>1</sup> Ծանոթագրություն: Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 251-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում փաստաթղթեր կեղծելու, 252-րդ հոդվածը՝ սերտեֆիկատներ կեղծելու, 255-րդ հոդվածը՝ արտասահմանյան փաստաթղթեր կեղծելու համար, 317-րդ հոդվածը՝ պետական ծառայողների կողմից փաստաթղթեր կեղծելու համար:

Բելգիայի Թագավորության քրեական օրենսգրքում ևս առկա են ՕՉԳ քրեաիրավական կարգավորող ուղղությանը վերաբերող կարգավորումներ: Բելգիայի քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք չի համարվում այն արարքը, որ կատարվել է օրենքով կամ իշխանության հրամանով (Belgian Criminal Code 1867):

Անդորրայի իշխանության քրեական օրենսգրքում ևս առկա են կարգավորումներ՝ ուղղված ՕՉԳ քրեաիրավական կարգավորմանը: Անդորրայի քրեական օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք է ծառայողական պարտականությունների կատարումը կամ ծառայողական դիրքից կամ մասնագիտությունից բխող իրավունքների իրականացումը (Penal Code of Andorra 2005):

Ալբանիայի Հանրապետության քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ ոչ ոք չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել օրենքով կամ իրավասու մարմնի հրամանով սահմանված իրավունքներն իրականացնելիս կամ պարտականությունները կատարելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հրամանն ակնհայտ ապօրինի է եղել (Criminal Code of The Republic of Albania 1995):

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ եթե հանցանքը կատարվել է ապօրինի հրամանի արդյունքում, ապա պատասխանատվություն է կրում հրամանը տված անձը:

ՕՉԳ քրեաիրավական ապահովման պաշտպանող ուղղության տեսանկյունից հետազոտական հետաքրքրություն պարունակող կարգավորումներ են ամրագրված Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքում (Criminal Code of the Republic of Estonia 2001): Այսպես՝ Էստոնիայի քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի առաջին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում ապօրինի հսկողական (դիտարկման) գործունեություն իրականացնելու կամ տեղեկություն ապօրինի և գաղտնի հավաքելու, հսկողական (դիտարկման) կամ գաղտնի գործունեության արդյունքում հավաքագրված տեղեկությունն ապօրինի թաքցնելու կամ ոչնչացնելու համար, եթե դա իրականացվել է այն անձի կողմից, որը օրենքով սահմանված իրավունք ունի իրականացնելու հսկողական (դիտարկման) կամ տեղեկության գաղտնի հավաքագրման գործունեություն:

Էստոնիայի քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ապացույցներ ոչնչացնելու կամ կեղծ ապացույցներ ստեղծելու համար՝ որպես հանցանք պատժվող արարքի կատարման կամ դրա բացակայության փաստը կամ ապացուցման առարկային վերաբերող ցանկացած այլ փաստ հաստատելուն խոչընդոտելու նպատակով:

Պայմանավորված այն հանգամանքով, որ ՀԱՊԿ Խորհրդարանական վեհաժողովի 2015 թվականի նոյեմբերի 26-ի՝ «ՀԱՊԿ անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման առաջարկություններ՝ ուղղված կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և կանխարգելման ոլորտում հարաբերությունների կարգավորմանը» № 8-6 որոշման մեջ ուղղակիորեն վկայակոչված են Բելառուսի և Ղազախստանի քրեական օրենսգրքերի՝ հետազոտվող թեմային սերտորեն առնչվող կարգավորումները, և արժևորելով դրանց բովանդակությունը՝ հարկ ենք համարում սույն պարագրաֆի ներքո այդ կարգավորումներին ևս առանձին անդրադարձ կատարել:

Այսպես՝ Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ «Հատուկ առաջադրանքով հանցակիցների շրջանում լինելը» վերտառությամբ 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը, գործող օրենսդրությանը համապատասխան կատարելով հանցագործությունը կանխելու, հայտնաբերելու կամ խափանելու հատուկ առաջադրանք և գործելով դրա

մյուս մասնակիցների հետ, ստիպված կկատարի հանցանք»: Նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված է. «սույն հոդվածի առաջին մասի կանոնները չեն կիրառվում անձի նկատմամբ, որը կատարել է առանձնապես ծանր կամ ծանր հանցանք՝ կապված մարդու կյանքի կամ առողջության նկատմամբ ոտնձգության հետ» (Уголовный кодекс Республики Беларусь 1999):

Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ «Օպերատիվ-հետախուզական, հակահետախուզական միջոցառումների կամ այլ գաղտնի քննչական գործողությունների իրականացումը» վերտառությամբ՝ 35-րդ հոդվածն ամրագրում է.

1. Քրեական իրավախախտում չի համարվում սույն օրենսգրքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած արարքը, որը Ղազախստանի Հանրապետության օրենքին համապատասխան կատարվել է օպերատիվ-հետախուզական, հակահետախուզական միջոցառումների կամ գաղտնի քննչական գործողությունների իրականացման ընթացքում լիազորված պետական մարմնի աշխատակցի կամ այդ մարմնի հանձնարարությամբ այդ մարմնի հետ համագործակցող այլ անձի կողմից, եթե այդ արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից՝ նախնական համաձայնությամբ, կամ հանցավոր խմբի կողմից կատարված քրեական իրավախախտումների կանխարգելման, բացահայտման կամ հետաքննության նպատակով կամ հետախուզական և (կամ) դիվերսիոն միջոցառումների նախագծուշացման, բացահայտման կամ կանխման նպատակով, եթե օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասն ավելի փոքր է, քան նշված քրեական իրավախախտումներով պատճառվող վնասը, և, եթե դրանց կանխումը, բացահայտումը կամ հետաքննումը, ինչպես նաև քրեական իրավախախտումների կատարման մեջ մեղավոր անձանց բացահայտումը չէին կարող իրականացվել այլ միջոցներով:

2. Սույն հոդվածի առաջին մասի դրույթները չեն տարածվում այն անձանց վրա, որոնք կատարել են այնպիսի արարքներ, որոնք զուգորդվել են մարդու կյանքի կամ առողջության, էկոլոգիական աղետի, հասարակական աղետի կամ այլ ծանր հետևանքների սպառնալիքով: (Уголовный кодекс Республики Казахстан 2014)

## V. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Միազգային/վերապետական և այլ պետությունների վերաբերելի փորձի ուսումնասիրումը օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման հիմնավորվածության և համապատասխան նորմերի իրավական մոդելավորման տեսանկյունից մեթոդոլոգիական օժանդակություն ունի: Միազգային/վերապետական փաստաթղթերում և այլ պետությունների օրենսդրություններում տեղ գտած կարգավորումների հետազոտումը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական կարգավորման առկա ընդհանուր վիճակի վերաբերյալ, ինչպես նաև թույլ է տալիս ըմբռնել դրա զարգացման միտումները՝ այդպիսով ուրվագծելով նաև ներպետական օրենսդրության կարգավորումների արդիականացման, իրավական մոդելավորման հեռանկարը:

Սույն հոդվածում իրականացված հետազոտության արդյունքներն օգտագործվելու են «Օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման արդի հիմնախնդիրները» վերտառությամբ մեր հաջորդ հոդվածում, որտեղ օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման պաշտպանող ուղղության ամբողջական ձևավորման նպատակով ներկայացվելու են առաջարկներ՝ ուղղված Քրեական օրենսգրքի Հատուկ մասի մի շարք հոդվածների լրամշակմանը և

«Օպերատիվ-հետախուզական միջոցառում ապօրինի իրականացնելը» վերտառությամբ նոր հոդվածի նախատեսմանը:

2. Մայրցամաքային և անգլոսաքսոնական իրավական համակարգերում որպես օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման ընդհանուր բազա կարելի է դիտարկել Միավորված ազգերի կազմակերպության՝ կոռուպցիայի դեմ կոնվենցիան և Միավորված ազգերի կազմակերպության՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան: Այս կոնվենցիաները պարտավորեցնում են դրանց անդամակցած պետություններին իրենց ներքին օրենսդրությանը համապատասխան ամրագրել կարգավորումներ՝ ուղղված իրականացվող քննությանը կամ քրեական հետապնդմանը աջակցած համագործակցող անձանց քրեաիրավական ապահովում, կոնվենցիաների տերմինալոգիայով՝ քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրելուն:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման տեսանկյունից հետազոտական բավականին մեծ հետաքրքրություն ունի ԱՊՀ իրավաստեղծ պրակտիկայի ուսումնասիրումը: ԱՊՀ կազմի մեջ մտնող պետություններում, կարծես, ձևավորվել է օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման սեփական մոտեցում, ինչի համար հիմք է ծառայել ԱՊՀ՝ 1996 թվականի նոյեմբերի 2-ին ընդունված «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» խորհրդատվական օրենսդրական ակտը, որն առաջարկում է անդամ պետությունների ազգային օրենսդրությունում ամրագրել նորմեր, որոնք, ի թիվս այնի, ուղղված են օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը:

4. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման համատեքստում հետազոտական հետաքրքրություն ունի նաև ՀԱՊԿ խորհրդարանական վեիսաժողովի 2015 թվականի նոյեմբերի 26-ի № 8-6 որոշումը՝ «ՀԱՊԿ անդամ-պետությունների օրենսդրության ներդաշնակեցման առաջարկություններ՝ ուղղված կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և կանխարգելման ոլորտում հարաբերությունների կարգավորմանը»:

Հիշատակված որոշման՝ «ՀԱՊԿ անդամ պետությունների քրեական օրենսդրություն կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հնարավորություն ընձեռող նորմերի համալիրի ներառումը» վերտառությամբ 2-րդ հոդվածում ամրագրված են, ըստ էության, օպերատիվ-հետախուզական քրեաիրավական ապահովմանն ուղղված կարգավորումներ:

5. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման տեսանկյունից բավականին արժեքավոր են ԱՄՆ՝ հետազոտվող թեմային վերաբերող կարգավորումները: Մեր իրականացրած հետազոտությունը ցույց տվեց, որ ԱՄՆ իրավական կարգավորումներում մեծ ուշադրություն է դարձված ՕՀԳ և՛ կարգավորող, և պաշտպանող ուղղություններին: Երկու ուղղությունների մասով էլ ԱՄՆ օրենսդրությունում ամրագրված են ներդաշնակ, փոխլրացնող կարգավորումներ և ինստիտուցիոնալ (համակարգային) երաշխիքներ:

6. ՕՀԳ քրեաիրավական ապահովմանն ուղղված արժեքավոր կարգավորումներ են ամրագրված նաև մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգի պետություններում: Այս հետազոտության շրջանակներում ներկայացված են մայրցամաքային իրավական համակարգին պատկանող միայն այն պետությունների՝ օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված կարգավորումները, այդ թվում՝ հանցակազմերը, որոնք կարող են նշանակություն ունենալ ՕՀԳ քրեաիրավական ապահովմանն ուղղված ՀՀ կարգավորումների իրավական մոդելավորման համար:

Շարադրվածի համատեքստում ՀՀ-ում ՕՀԳ քրեաիրավական ապահովմանն ուղղված կարգավորումների իրավական մոդելավորման համար հետազոտական հետաքրքրություն ունեն Լիտվայի Հանրապետության, Շվեյցարիայի

Համադաշնության, Բելգիայի Թագավորության, Անդորրայի Իշխանության, Ալբանիայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքերում տեղ գտած կարգավորումները, որոնք և մանրամասն հետազոտման են ենթարկվել սույն հոդվածի շրջանակներում:

## ՕԳՏԱԳՈՐԾԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քրեական օրենսգիրք. 05 մայիսի, 2021. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=199821>: Վերջին այց՝ 10.02.2025:
2. «Постановление № 8-6 Парламентской Ассамблеи Организации законодательства о коллективной безопасности «Рекомендации по гармонизации законодательства государств – членов ОДКБ, регулирующего отношения в сфере предупреждения и борьбы с организованной преступностью» Paodkb.org, Санкт-Петербург, 26.11.2015, <https://paodkb.org/documents/rekomendatsii-po-garmonizatsii-zakonodatelstva-gosudarstv-chlenov-32>. Последний визит: 21.09.2024.
3. «Постановление Межпарламентской Ассамблеи государств – участников Содружества Независимых Государств О рекомендательном законодательном акте «О борьбе с организованной преступностью». Cis.minsk.by, Санкт-Петербург, 02.11.1996, <https://cis.minsk.by/reestr2/doc/6026#text>. Последний визит: 21.09.2024.
4. Уголовный кодекс Республики Беларусь. 09.07.1999, [https://continent-online.com/Document/?doc\\_id=30414984](https://continent-online.com/Document/?doc_id=30414984). Последний визит: 02.02.2025.
5. Уголовный кодекс Республики Казахстан. 03.07.2014, [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=31575252&doc\\_id2=31575252&activate\\_doc=2&pos=42;-125.19999694824219&pos2=843;-108.19999694824219](https://online.zakon.kz/Document/?doc_id=31575252&doc_id2=31575252&activate_doc=2&pos=42;-125.19999694824219&pos2=843;-108.19999694824219). Последний визит: 02.02.2025.
6. “Arkansas Code, 2020 Edition, Title 5 – Criminal offenses”. Justia Law, <https://law.justia.com/codes/arkansas/2020/>. Accessed: 02.12.2023.
7. Barseghyan Gevorg, The Concept of Criminal-Legal Provision of Operational-Search Activities and a Brief Description of Its Directions, State and Law N 2 (99) 2024, pages 162-173, <https://www.researchgate.net/publication/389314520>
8. Belgian Criminal Code. 08.06.1867, [https://legislationline.org/sites/default/files/documents/6e/BELG\\_CC\\_fr.pdf](https://legislationline.org/sites/default/files/documents/6e/BELG_CC_fr.pdf). Accessed: 02.02.2025.
9. Cameron Dell, O'Neill Patrick Howell. *FBI Authorized Informants to Break the Law 22,800 times in 4 years*. The Daily Dot, 2016, <https://www.dailydot.com/irl/fbi-informants-otherwise-criminal-activity-report-foia/>. Accessed: 03.12.2023.
10. “Confidential Informants: Updates to Policy and Additional Guidance Would Improve Oversight by DOJ and DHS Agencies (Report to the Chairman, Committee on the Judiciary, U.S. Senate 2015GAO-15-807)”. United States Government Accountability Office, <http://www.gao.gov/assets/680/672514.pdf>. Accessed: 03.12.2023.
11. Criminal Code of Republic of Lithuania, approved by Law No VIII-1968 of 26 September 2000, <https://e-seimas.lrs.lt/rs/legalact/TAD/28b18041843311e89188e16a6495e98c/>. Accessed: 02.02.2025.
12. Criminal Code of The Republic of Albania. 27.01.1995, <https://legislationline.org/sites/default/files/2023-10/CRIMINAL%20CODE%20OF%20THE%20REPUBLIC%20OF%20ALBANIA.pdf>. Accessed: 02.02.2025.

13. Criminal Code of the Republic of Estonia. 06.06.2001, <https://legislationline.org/sites/default/files/2023-12/Criminal%20Code%20of%20the%20Republic%20of%20Estonia%20%282021%2C%20as%20amended%202023%29%20%28English%29.pdf>. Accessed: 02.02.2025.
14. "Guidelines Manual". *United States Sentencing Commission*, November 1, 1987, amended November 1, 2023, Chapter three (Adjustments), Part B (Role in the offense), §3B1.1(Aggravating Role), Commentary, Point 1, <https://www.ussc.gov/guidelines/2023-guidelines-manual/annotated-2023-chapter-3#3b11>. Accessed: 03.12.2023.
15. "Guidelines on Undercover Operations". *IGNET*, June 18, 2013, <https://www.ignet.gov/sites/default/files/files/guidelines-undercover-operations-june-2013.pdf>. Accessed: 03.12.2023.
16. "Mississippi Code 1972, Title 97 – Crimes, Chapter 9 - Offenses Affecting Administration of Justice, Article 3 - Obstruction of Justice". *Justia Law*, 2023, [Section 97-9-127 - Retaliation against a public servant or witness. https://law.justia.com/codes/mississippi/title-97/chapter-9/article-3/section-97-9-127/](https://law.justia.com/codes/mississippi/title-97/chapter-9/article-3/section-97-9-127/). Accessed: 20.09.2024.
17. "Nebraska Revised Statutes, 2023 Edition, Chapter 28 – Crimes and punishments, 28-901 - Obstructing Government Operations; penalty. 28-919 - Tampering with Witness or Informant; Jury Tampering; Penalty". *Justia Law*, <https://law.justia.com/codes/nebraska/chapter-28/>. Accessed: 20.09.2024.
18. "Nevada Revised Statutes, 2024 Edition, Chapter 199 - Crimes Against Public Justice, section 199.520 - Disclosure of Information to Subject of Investigation". *Leg.state.nv.us*, <https://www.leg.state.nv.us/nrs/NRS-199.html>. Accessed: 20.09.2024.
19. "North Dakota Century Code. Title 12.1 Criminal Code Chapter 12.1-09. Tampering and Unlawful Influence". *Ndlegis.gov*, <https://ndlegis.gov/general-information/north-dakota-century-code/index.html>. Accessed: 20.09.2024.
20. Penal Code of Andorra. 21.02.2005, [https://sherloc.unodc.org/cld/document/and/2005/penal\\_code\\_of\\_andorra\\_as\\_of\\_2014.html](https://sherloc.unodc.org/cld/document/and/2005/penal_code_of_andorra_as_of_2014.html). Accessed: 02.02.2025.
21. Robinson Paul and others. *The American Criminal Code: General Defenses* (March 15, 2015). *The Journal of Legal Analysis*, Vol. 7, P. 37, 2015, U of Penn Law School, Public Law Research Paper No. 14-28, <https://ssrn.com/abstract=2495028>. Accessed: 03.12.2023.
22. *Supreme Court of Montana*. IN RE: the Grievance of Mark J. BRADY, Petitioner and Appellant v. Montana Department of Justice, Respondent and Respondent. No. 98-073. Decided: June 29, 1999, <https://caselaw.findlaw.com/court/mt-supreme-court/1440444.html>. Accessed: 03.12.2023.
23. Swiss Criminal Code of 21 December 1937. (Status as of 1 July 2020), [https://legislationline.org/sites/default/files/documents/94/SWITZ\\_Criminal%20Code\\_as%20of%202020-07-01.pdf](https://legislationline.org/sites/default/files/documents/94/SWITZ_Criminal%20Code_as%20of%202020-07-01.pdf). Accessed: 02.02.2025.
24. "The Attorney General's Guidelines Regarding the Use of FBI Confidential Human Sources". *Irp.fas.org*, 13-12-2004 <https://irp.fas.org/agency/doj/fbi/chs-guidelines.pdf>. Accessed: 03.12.2023.
25. *The Federal Bureau of Investigation's Compliance with the Attorney General's Investigative Guidelines* (Redacted). Special Report, Office of the Inspector General. Chapter Three: The Attorney General's Guidelines Regarding the Use of Confidential Informants, section "III", point "C", September 2005, <https://oig.justice.gov/special/0509/chapter3.htm>. Accessed: 03.12.2023.
26. "The United States Code, 2024 edition, Title 18 (Crimes and criminal procedure), Patr I (Crimes), Chapter 73 (Obstruction of justice), Section 1510 (Obstruction of criminal

investigations)".

*Uscode.house.gov*,

<https://uscode.house.gov/view.xhtml?req=granuleid:USC-prelim-title18-section1510&num=0&edition=prelim>. Accessed: 11.08.2024.

27. "The United States Code, 2024 edition, Title 18 (Crimes and criminal procedure), Patr I (Crimes), Chapter 73 (Obstruction of justice), Section 1512 (Tampering with a witness, victim, or an informant)". *Uscode.house.gov*,

<https://uscode.house.gov/view.xhtml?req=granuleid:USC-prelim-title18-section1512&num=0&edition=prelim>. Accessed: 11.08.2024.

28. "Undercover and Sensitive Operations Unit, Attorney General's Guidelines On Fbi Undercover Operations". *Justice.gov*, November 13, 1992, <https://www.justice.gov/archives/ag/undercover-and-sensitive-operations-unit-attorney-generals-guidelines-fbi-undercover-operations#introduction>. Accessed: 03.12.2023.

29. "United States v. Myers, 527 F. Supp. 1206 (E.D.N.Y. 1981), US District Court for the Eastern District of New York - 527 F. Supp. 1206 (E.D.N.Y. 1981) July 24, 1981, section V. General Discussion of Basic Legal Concepts". *Justia Law*, <https://law.justia.com/cases/federal/district-courts/FSupp/527/1206/2368969/>. Accessed: 03.12.2023.

30. "United States v. Russell, 411 U.S. 423. No. 71-1585". *Supreme.justia.com*, 1973. <https://supreme.justia.com/cases/federal/us/411/423/>. Accessed: 03.12.2023.

31. "US District Court for the Eastern District of New York - 527 F. Supp. 1206 (E.D.N.Y. 1981)". *Justia Law*, July 24, 1981. <https://law.justia.com/cases/federal/district-courts/FSupp/527/426/2369427/>. Accessed: 03.12.2023.

32. "Bundesgesetz über die verdeckte Ermittlung (BVE), vom 20". *Fedlex.admin.ch*, Juni 2003, <https://www.fedlex.admin.ch/eli/oc/2004/177/de>. Accessed: 02.02.2025.

## WORKS CITED

1. HH k'reakan orensirk' [RA Criminal Code]. 5 Mayisi, 2021. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=199821>, Accessed: 10.02.2025. (In Armenian)

2. Postanovlenie Mezhparlamentskoj Assamblei gosudarstv – uchastnikov Sodruzhestva Nezavisimyh Gosudarstv O rekomendatel'nom zakonodatel'nom akte "O bor'be s organizovannoj prestupnost'ju" [Resolution of the Interparliamentary Assembly of the Member States of the Commonwealth of Independent States On the Legislative Recommendation Act "On Combating Organized Crime"] Sankt-Peterburg, 02.11.1996] <https://cis.minsk.by/reestriv2/doc/6026#text>. Accessed: 21.09.2024. (In Russian)

3. Postanovlenie № 8-6 Parlamentskoj Assamblei Organizacii Dogovora o kolektivnoj bezopasnosti "Rekomendacii po garmonizacii zakonodatel'stva gosudarstv – chlenov ODKB, regulirujushhego otnoshenija v sfere preduprezhdenija i bor'by s organizovannoj prestupnost'ju" [Resolution No. 8-6 of the Parliamentary Assembly of the Collective Security Treaty Organization "Recommendations on the harmonization of legislation of the CSTO member states regulating relations in the field of prevention and combating organized crime"], Sankt-Peterburg, 26.11.2015. <https://paodkb.org/documents/rekomendatsii-po-garmonizatsii-zakonodatelstva-gosudarstv-chlenov-32>. Accessed: 21.09.2024. (In Russian)

4. Ugolovnyj kodeks Respubliki Belarus' [Criminal code of The Republic of Belarus], 09.07.1999, [https://continent-online.com/Document/?doc\\_id=30414984](https://continent-online.com/Document/?doc_id=30414984). Accessed: 02.02.2025. (In Russian)

5. Ugolovnyj kodeks Respubliki Kazahstan [Criminal code of The Republic of Kazakhstan], 03.07.2014, [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=31575252&doc\\_id2=31575252#activate\\_doc=](https://online.zakon.kz/Document/?doc_id=31575252&doc_id2=31575252#activate_doc=)

## THE INTERNATIONAL EXPERIENCE IN CRIMINAL-LEGAL PROVISION OF OPERATIONAL-SEARCH ACTIVITIES

**GEVORG BARSEGHYAN**

*Yerevan State University, Faculty of Law, Chair of Criminal Law,  
Ph.D. Student, Lecturer,  
Yerevan, the Republic of Armenia*

From the perspective of the justification of criminal-legal provision of operational-search activities and the legal modeling of relevant norms, the study of the international experience provides methodological support.

The purpose of this article is to examine the relevant regulations found in international/supranational legal acts and the criminal legislation of other countries, aimed at criminal-legal provision of operational-search activities.

In this context, we have considered it purposeful to make the subject of research the experience of law-making and law-enforcement activities of authorizing norms providing operational-search activities and the directions of criminalization of publicly dangerous acts that encroach on objects under criminal-legal protection during operational-search activities.

To achieve the stated objective, the following main tasks have been formulated:

- Study of international/supranational legal acts, aimed at criminal-legal provision of operational-search activities.
- Study of legal regulations of the USA, aimed at criminal-legal provision of operational-search activities,
- Study of legal regulations of the states with a continental legal system, aimed at criminal-legal provision of operational-search activities.
- Implementation of necessary conclusions based on the results of the conducted research.

The subject of the research has been examined using general (universal) and specific scientific methods, such as dogmatic, comparative legal, logical analysis, and legal modeling methods.

As a result of the conducted research, a number of conclusions have been made, which provide an understanding of the current general state of the criminal-legal regulation of operational-search activities, as well as allow for the comprehension of its development tendencies, thereby outlining the prospects for the modernization of domestic legislative regulations and legal modeling.

**Keywords:** *operational-search activities, criminal-legal provision, international experience, international legal acts, experience of other states, criminal code, authorizing norms, criminalization directions.*

## МЕЖДУНАРОДНЫЙ И ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ УГОЛОВНО-ПРАВОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

**ГЕВОРГ БАРСЕГЯН**

*аспирант, преподаватель кафедры уголовного права  
юридического факультета*

*Ереванского государственного университета,  
г. Ереван, Республика Армения*

С точки зрения обоснованности уголовно-правового обеспечения оперативно-розыскной деятельности и правового моделирования соответствующих норм методологическую помощь способно оказать изучение международного и зарубежного опыта.

Целью настоящей статьи является исследование соответствующих норм международных/наднациональных правовых актов и уголовного законодательства других стран, направленных на уголовно-правовое обеспечение оперативно-розыскной деятельности.

В этой связи мы посчитали целесообразным сделать предметом исследования опыт правотворческой и правоприменительной деятельности по закреплению норм, обеспечивающих оперативно-розыскную деятельность, а также направления криминализации общественно опасных деяний, посягающих на объекты уголовно-правовой охраны при осуществлении оперативно-розыскной деятельности.

Для достижения поставленной цели были сформулированы следующие основные задачи:

- Исследование международных/наднациональных правовых актов, направленных на уголовно-правовое обеспечение оперативно-розыскной деятельности,
- исследование правовых норм США, направленных на уголовно-правовое обеспечение оперативно-розыскной деятельности,
- исследование правовых норм государств континентальной правовой системы, направленных на уголовно-правовое обеспечение оперативно-розыскной деятельности,
- выполнение необходимых выводов по результатам проведённого исследования.

Предмет исследования изучался с применением общих (универсальных) и специальных научных методов, таких как догматический, сравнительно-правовой, логический и правового моделирования.

В результате проведённого исследования был сделан ряд выводов, которые дают представление о текущем общем состоянии уголовно-правового регулирования оперативно-розыскной деятельности, а также позволяют понять тенденции их развития, тем самым очерчивая перспективы модернизации внутреннего законодательного регулирования и правового моделирования.

**Ключевые слова:** *оперативно-розыскная деятельность, уголовно-правовое обеспечение, международный опыт, международно-правовые акты, опыт других государств, уголовный кодекс, уполномочивающие нормы, направления криминализации.*